ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5/2

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էր՝ Շահեն Մինասյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, ՀՈԱԿ-ի տնօրեններ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Բագրատ Զաքարյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարին փոխարինող Աննա Քրիստափորյանը:

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի 2023 թվականի հոկտեմբերի 17-ի N2 հերթական նիստի օրակարգը՝

1)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2023 թվականի ինը ամսվա բյուջեի եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի մասին
2)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին
3)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասերի վարձավճարի տույժերը զիջելու մասին
4)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին

5)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 142-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
6)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականությանը պատկանող տարածքները հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-ծրագիր 4-ի Քաջարան-Ագարակ հատվածի շրջանակներում հանրության գերակա շահերի ապահովման նպատակով Հայաստանի հանրապետությանը օտարելու մասին
7)«Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N53-Ա որոշման 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչելու մասին
8)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N135-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
9)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 99-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԻՆԸ ԱՄՍՎԱ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2023 թվականի բյուջեի ինը ամսվա եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի կողմից տրված հաղորդումը՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-5 հավելվածների:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է /Որոշում N 100-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից կատարել հատկացումներ՝ համաձայն N1, N2, N3 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է /Որոշում N 101-Ն/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՏՈՒՅԺԵՐԸ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՁԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1. Ձիջել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասերի վարձավճարի տույժերը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 102-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՁԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղի Այգեձոր 47 հողամաս հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող կադաստրային ծածկագիր 09-092-0102-0047) ջրային հողերի կատեգորիայի «հիդրոտեխնիկական օբյեկտների հողեր» գործառնական նշանակության 0.01407 հա հողամասը կառուցապատման իրավունքով մինչև 2025 թվականի դեկտեմբերի 16-ը տրամադրել «Լիճքվազ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սահմանելով 240 000 դրամ տարեկան վճար՝ պոմպակայանի կառուցման համար:
2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-10 Դեմ-1 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է /Որոշում N 103-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 142-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի՝ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու և անհատույց սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը հողամասեր օտարելու մասին» N 142-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ 1-ին կետում «0,1721» թվերը փոխարինել «0,06574» թվերով, «09-039-0004-0003» թվերը փոխարինել «09-039-0004-0012» թվերով, 2-րդ կետում «0,1721» թվերը փոխարինել «0,06574» թվերով:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 104-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 4-Ի ՔԱՋԱՐԱՆ-ԱԳԱՐԱԿ ՀԱՏՎԱԾԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1. Տալ համաձայնություն Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, հանրության գերակա շահ ճանաչված հողամասերը առաջարկված փոխհատուցման գումարներով օտարելու Հայաստանի Հանրապետությանը՝ համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105-Ա/

ԼՍԵՑ - «ՄԵՂՐԻԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 53-Ա ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ԿԵՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1. Հաստատել «Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի «Մեղրու համայնքային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ը վերանվանելու, կանոնադրությունը նոր խմբագրությամբ, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N53-Ա որոշման 2-րդ կետը:
3. Կազմակերպության տնօրենին՝ տասնօրյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ «Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը օրենքով սահմանված կարգով գրանցելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է /Որոշում N 106-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N135-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N99-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N135-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է /Որոշում N 107-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի նոյեմբերի 21-ը՝ ժամը 17:00-ն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 108-Ա/

Ավագանու անդամներ

ՍՈՆԱ ԱԴԱՄՅԱՆ
ԱՆԱՀԻՏ ԱՂԱՄԱԼՅԱՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ԱՐՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ
ԱՐԱՐԱՏ ԹՈՒՄԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՄԱՐՈՒՍՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱՐՏՈՒՇ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ՄԱՐՅԱՄ ՄԻՔԱԵԼՅԱՆ
ՆԱՐԵԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
ԱՐԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ԱՆԺԵԼԱ ՎԱՆԵՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ա. Քրիստափորյան